ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024թ. թիվ 223-Ա

Ն.ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ԹԻՎ 1
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար դիմած հավակնորդի հետ պայմանագրի կնքման մասին 2024 թվականի ապրիլի 22-ի արձանագրությունը և ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի հունվարի 17-ի թիվ 26-Ա որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նաիրա Պետիկի Պետրոսյանին 2024 թվականի ապրիլի 25-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ն.Պետրոսյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

23/04/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. ապրիլի 23
ք.Վանաձոր